

ՆԱՐԵԿ ՎԱԼԵՆՏԻՆԻ
ԹՈՎՄԱՍՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ, ջութակահար
Ծրագրերի կառավարման դիպլոմավորված մասնագետ (PMP®)

E-mail: narek.tovmasyan@gmail.com

Doi:10.58580/18290019-2024.1-2-45

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 15.8.2024 թ.,
ընդունվել է տպագրության՝ 10.9.2024 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 8.8.2024 թ.:

© Հեղինակ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution
4.0, 3.0 Licence-ին համապատասխան:

ՏՊՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԿԻՎ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նոր վերելքի և միջազգային ճանաչման շրջան.

Դավիթ Խանջյան, Վալերի Գերգիև (1974-1985թթ.)

(«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը
և ազգային երաժշտական մշակույթը» թեզից հատված)

Անկճում

Հոդվածագիրը ներկայացնում է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբում Դավիթ Խանջյանի գործունեությունը՝ նրա մուտքը նվագախումբ, որը
զարգացման է մի նոր որակ հաղորդեց նվագախմբի գործունեությանն այդ շրջանում՝ հատկապես հայ ժամանակակից կոմպոզիտորների
ստեղծագործությունների խանջյանական մեկնաբանմամբ: Իր վաղ գործունեությամբ այն լուսապսակեց մինչև կյանքի ավարտը՝ 1981 թվականը:
Նրանից հետո հրավիրվեց Վալերի Գերգիևը: Նա ղեկավարեց Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը 1981-1985 թվականներին: Վալերի Գերգիևը
դիրիժորական իր արվեստով կարճես թե եկավ լրացնելու էր Դավիթ Խանջյանի անավարտ թողած ծրագրերը: Հայաստանի պետական սիմֆոնիկ
նվագախմբի հետև Վալերի Գերգիևը, և այլ քաղաքներում (հյուրախաղերով) Վ. Գերգիևը ղեկավարել է 67 համերգ՝ հնչեցնելով արևմտաեվրոպական և ռուս
դասականների երկեր: Մեծ արժեք ու նշանակություն ունեն Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ նրա ղեկավարությամբ առաջին ան-
գամ հնչած հայ կոմպոզիտորների շուրջ 30 պարտիտուրները:

Բանալի-բառեր. Վալերի Գերգիև, Հայաստան, Դավիթ Խանջյան, դիրիժոր, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ, գործունեություն, Մարիինյան
թատրոն:

Abstract

PhD in Art History, musicologist, Project Management Professional Diploma, PMP® Narek Valentin Tovmasyan. - "The Period
of New Rise and International Recognition of the Armenian State Symphony Orchestra: David Khanjian, Valery Georgiev (1974-
1985)" ("The State Symphony Orchestra of Armenia and National Musical Culture," excerpt from dissertation)".

The author of the article presents the activities of David Khanjian within the Armenian Philharmonic Orchestra: his entry into the
orchestra and the development of a new quality in the ensemble's formation during this period, particularly through Khanjian's
interpretation of works by contemporary Armenian composers. Through his vibrant activity, he illuminated the orchestra until the
end of his life - up to the year 1981. The author presents Valery Georgiev's activities in Armenia, particularly his role in leading
the Armenian Philharmonic Orchestra from 1981 to 1985. Georgiev's conducting artistry seems to have filled the gap left by David
Khanjian's unfinished plans. With the State Symphony Orchestra of Armenia, both in Yerevan and other cities (during tours),
Georgiev conducted 67 concerts, performing Western European and Russian classical works. Of great value and significance are
the approximately 30 compositions by Armenian composers that were performed for the first time under his leadership with the State
Symphony Orchestra of Armenia.

Key Words: Valery Georgiev, Armenia, David Khanjian, conductor, activities, Mariinsky Theatre.

Абстракт

Кандидат искусствоведения, музыковед, скрипач, специалист по управлению проектами PMP® Наре́к Валентинович
Товмасын. - "Период нового подъема и международного признания Армянского государственного симфонического оркестра. Давид Ханджян,
Валерий Гергиев (1974 -1985)" ("Государственный симфонический оркестр Армении и национальная музыкальная культура" (отрывок
диссертации)).

Автор статьи представляет деятельность Давида Ханджяна в Армянском филармоническом оркестре — его вхождение в оркестр и развитие нового
качества в деятельности оркестра в этот период — в особенности интерпретацию Ханджяном произведений современных армянских композиторов.
Своей яркой деятельностью он освещал оркестр до конца своей жизни - до 1981 года. После него был приглашен Валерий Гергиев, руководивший
филармоническим оркестром Армении в 1981-1985 годах, который своим дирижерским искусством пришел осуществить незавершенные планы
Давида Ханджяна. С Государственным симфоническим оркестром Армении как в Ереване, так и с гастроями в других городах Валерий Гергиев
провел 67 концертов, исполняя произведения западноевропейской и русской классики. Большую ценность и значение имеет первое исполнение
Государственным симфоническим оркестром Армении под его руководством около 30 произведений (партитур) армянских композиторов.

Ключевые слова: Валерий Гергиев, Армения, Давид Ханджян, дирижер, деятельность, Мариинский театр.

Հայաստանի ֆիլհարմոնիկ ազգային նվագախումբ-100

ՏՊԻՐԻՑԻՆԱԿԱՆ ԱՐԿԻՄ

Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը 1945-ից 1960 թվերի իր ղեկավարին մոռանալ չէր կարողանում: Երաժիշտ, փիլիսոփա, դիրիժոր, կատարող, մանկավարժ էր Մ. Մալունցյանը, որը կոնսերվատորիայից սկսած իր տեսադաշտում էր պահում երաժիշտներին, և համոզվելով նրանց պրոֆեսիոնալ մակարդակի որոշակի բարձրության հասնելուն, անմիջապես հրավիրում էր նվագախումբ: Երևի հենց այս հանգամանքն էր պատճառը, որ դիրիժորներ փոխելով նվագախումբը փնտրում էր իր դիրիժորին, մանկավարժին, ղեկավարին, որը ինչ-որ հասկանալիություններով նմանվեր Մ. Մալունցյանին: Եվ այդպիսինը գտնվեց՝ Դավիթ Խանջյանը: 1974 թ. հունվարի 25-ին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորական վահանակի առջև կանգնեց երիտասարդ, նոր գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, համամիութենական մրցույթի դիպլոմակիր Դավիթ Խանջյանը*:

Անշուշտ Դ. Խանջյանի ձևավորման, կայացման և ինքնահաստատման գործում մեծ դեր խաղացին ընտանեկան երաժշտական ավանդույթները (հայրը՝ Հակոբ Խանջյանը, ջութակահար, հանրապետության երաժշտական կյանքի կազմակերպիչներից մեկը, մայրը՝ Տաթևիկ Սազանդարյանը, երգարվեստի և օպերային արվեստի հիանալի ներկայացուցիչ ու գործիչ): Այստեղից էլ երևի ծագում է մասնագիտության ընտրության գլխավոր գործոնը: Նրա կյանքի ճանապարհը բերեց դեպի նպատակակետ՝ դիրիժորություն: Այստեղ նրան աջակից դարձավ Լենինգրադի կոնսերվատորիայի շրջանավարտ, դեռևս Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի արշալույսին Կոնստանտին Սարաջևի հետ աշխատած, բազմամաստակ դիրիժոր Իսախր Խարաջանյանը, իսկ Միքայել Մալունցյանի դիրիժորության դասերը նրա համար հանդիսացան այն համալսարանները, որոնք Դավիթ Խանջյանին պրոֆեսիոնալ բարձրակարգ դիրիժոր դարձրին: Դ. Խանջյանի մուտքը նվագախումբ համեստ էր, սակայն բավականին վստահ: Նրա առաջին իսկ բեմերը 1968-ին ցույց տվեց, որ ասպարեզ է մտել լրջմիտ, նվագախմբային հնչողության գիտակ, քաջատեղյակ ու լավ լսող մի երաժիշտ: 1968 թ. հունիսի 13-ին կայացած համերգը, որին նա ղեկավարեց Վերբի, Մոցարտի և Շոստակովիչի ստեղծագործությունները, ճակատագրական նշանակություն ունեցավ երիտասարդ դիրիժորի համար: Այս համերգից հետո, դիրիժորի հայրը որդուն ալբոմով նվիրելով, առաջին էջում թողել է այսպիսի գրություն. «Дорогой сын, по этому образцу изо дня в день собери все. Со временем будет биография. В добрый, трудный путь!» Այս նախադասությունն էլ դարձավ դիրիժորի ուղու խորհրդանիշը:

Հաջորդ համերգը, որը կայացավ 1969 թ. ապրիլի 26-ին, Դավիթ Խանջյանի ղեկավարությամբ, նվիրված էր Վ. Լենինի ծննդյան 100-ամյակին: Օրագրում Շոստակովիչի 11-րդ սիմֆոնիան էր («1905 թիվ») և Միքելանջի ջութակի և նվագախմբի Կոնցերտը: Մենակատարը՝ միջազգային



Դավիթ Խանջյան
David Khanjyan
Давид Ханджян

մրցույթների դափնեկիր, 22-ամյա Ռուբեն Ահարոնյանն էր: Այս շրջանում Դավիթ Խանջյանը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբում աշխատում էր որպես ստաժոր: Միմիջոցով նվագախմբի ստաժորին, ապա և երկրորդ դիրիժորին անմիջապես պատասխանատու ծրագրեր հանձնարարվեցին, որոնցով նա սկսեց հաճախ հանդես գալ նվագախմբի հետ: Հատկապես նշանակալի էր նրա ինքնուրույն և հաստատուն աշխատանքը Հայաստանի կոմպոզիտորների միության պլենումների և համագումարների ժամանակ, երբ երիտասարդ դիրիժորը հնչեցնում էր հայ կոմպոզիտորների նոր ստեղծագործությունները:

Այստեղ է, որ հայ կոմպոզիտորներից շատերը համոզվեցին, որ իրենց մտքերի ու ապրումների իրականացնողն իրենց ժամանակակից ու սերնդակից Դավիթ Խանջյանն է: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ Դավիթ Խանջյանը մասնակցեց Թբիլիսիի հյուրախաղերին, որոնք «Вечерний Тбилиси» թերթն անվանեց «Հաճելի հանդիպում»: Հիշարժան համերգներից պետք է նշել Լյուդվիգ վան Բեթհովենի ծննդյան 200-ամյակին նվիրված նրա ղեկավարած համերգը, ծրագրում ունենալով «Էզոնոս», «Կորիդան» նախերգանքները, ջութակի և նվագախմբի «Ռոմանսը» և վերջապես 7-րդ Միմիջոցով, որը խոսում է դիրիժորի հասունության, ինքնահաստատման մասին: 1971-ին ղեկտեմբերին Մոսկվայում կայացած երիտասարդ դիրիժորների համամիութենական մրցույթին Հայաստանը ներկայացրեց Դավիթ Խանջյանը: Խորհրդային միության 13 հանրապետությունների 30 քաղաքներից ժամանած 63 դիրիժորների մեջ հայ դիրիժորն արժանացավ պատվավոր դիպլոմի: Ի դեպ, վերջին փուլին մասնակցած 7 դիրիժորներից միայն երկուսն արժանացան մրցանակի, իսկ 5-ը պատվավոր դիպլոմի*:

Այդ մասին «Московский комсомолец» թերթում (22.12.1971 թ.) հոդվածագիր Տ. Գրում-Գրժեմայսկայան գրում է. «Ярче других дипломантов конкурса сказали»

* Դավիթ Խանջյանը (1940-1981) 1968 թ. ավարտել է Երևանի կոնսերվատորիայի դիրիժորության բաժինը (ղեկավար՝ Մ. Մալունցյան):

* Մրցույթի Առաջին մրցանակը շնորհվեց Ալեքսանդր Լազարևին, Երկրորդը՝ Վոլոդեմար Նելսոնին:

свое "последнее" слово дирижер Ереванской филармонии, воспитанник профессора Малунциана Давид Ханджян и дирижер из Алма-Аты Самуил Фридман. Первый - чистый "олимпиец", почти наблюдатель за дирижерским пультом, порой он даже кажется флегматичным, но в нем, во всей его фигуре, взгляде, мимике живет и излучается точное чувство ритма и музыкального характера. Его темперамент включается мгновенно на решающем взлете и обжигает слушателей и оркестрантов неожиданной новизной. Эстетичность и благородство общего облика Ханджяна-дирижера не подлежат сомнению. Слушатели надолго запомнят очарование и "Симфонических танцев" Рахманинова, и изящный облик исполненной Симфонии для струнных и литавр Мирзояна".

Շուտով նա գործուղվեց Վիեննա՝ երաժշտական ակադեմիայի կատարելագործման դասընթացներին մասնակցելու, ուր նրա խորհրդատուներն էին Գ. Սվարովսկին և Ֆ. Չերիխը: Վիեննայում և Զալցբուրգում 1972-1973 թթ. համերգաշրջանում Դավիթ Խանջյանի լսած համերգներն ու օպերային ներկայացումները ոչ միայն հղկեցին երիտասարդ դիրիժորի պրոֆեսիոնալիզմը, այլև կոմպոզիտորներին երաժշտական այն մակարդակը, որի մեջ այլևս պետք է շարունակել իր ուղին, նպատականաշեղանքի նրա զարգացման, կատարվող ստեղծագործությունների ոճի ու ժամանակաշրջանի զգացողությունը, կոմպոզիտորական անհատականությունների նկատմամբ ստեղծագործական հետաքրքրությունը:

Դավիթ Խանջյանի հետ Պատվավոր դիպլոմներ շնորհվեցին՝ Մամուլի Ֆրիդմանին, Բոր Միմովիչին, Էդվարդ Չիվժեյին, Անատոլի Էնգելբրեխտին: Նվագախումբում աշխատելու առաջին իսկ օրից Դավիթ Խանջյանի դիրիժորական արվեստն առիթունում ու գրավում էր ոգեշունչ երաժշտականությամբ, նորի հիանալի զգացողությամբ, յուրաքանչյուր ստեղծագործության դրամատիկական ամբողջությամբ: Պրոֆեսոր Բրինա Տիգրանյան, վերլուծելով Դ. Խանջյանի գործունեությունը, գրում է. "Если при первом исполнении поражаля профессионально тщательное прочтение этой гениальной партитуры (Շոստակովիչ' 10-րդ Սիմֆոնիա. - Ն. Թ.), при кототром ни один звук, ни один штрих, ни одна линия не остались вне внимания дирижера, то впоследствии концерте со всей силой и остротой слушатели восприняли концепцию симфонии, раскрытую дирижером, ее колоссальный драматический накал, доходящий до трагедийной безысходности. Это был один из тех самых звездных моментов, когда дирижер и композитор словно бы сливаются на волне творческого единения. Кстати, это состояние сиюминутного творчества было свойственно внутреннему настрою Давида Ханджяна" (1. էջ 5).

Հետևելով Խանջյանի ծրագրային քաղաքականությանը, գործունեության սկզբից իսկ ակնառու է այն հանգամանքը, որ արվեստագետն իր ուշադրության կենտրոնում է պահել պրեմիերաների շարքը, ինչն ապացուցում է նվագախմբի նվագացանկը ընդլայնելու նրա ձգտումը և նաև ունկնդրին գրավելու առաջին նախապայմանը:

Վիեննայից վերադառնալուց հետո, 1973 թ. սեպտեմբերից

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գրեթե բոլոր համերգները Դավիթ Խանջյանն էր ղեկավարում և ներկայացնում այնպիսի ծրագրեր, որոնք բնորոշում էին երիտասարդ դիրիժորի տաղանդն ու ինքնատիպությունը, անհատական, յուրովի մեկնարկությունն ու գեղարվեստական վառ դրսևորումը: Մոցարտ, Հայդն, Բեթհովեն, Բրամս, Վեբեր, Շոստոև, Ռավել, Բ. Ստրավինսկի, Ա. Աճեմյան, Ղ. Մարյան, Ա. Տերտերյան, Գ. Եղիազարյան: Ահա այն կոմպոզիտորները, որոնց ստեղծագործություններն այդ շրջանում ղեկավարել է Դ. Խանջյանը:

Պրոֆեսոր Ա. Բուրաշյանը գրում է. "Под управлением Ханджяна впервые прозвучали в Ереване многие произведения выдающихся композиторов XX века: "Дон Кихот" Р.Штрауса, "Чудесный мандарин" Бартока, "Петрушка", "Жар-птица", "Весна священная", "Дамбартон окс", Скрипичный концерт Стравинского, Восьмая и Одиннадцатая симфонии Шостаковича (я назвал лишь наиболее значительные премьеры). Этот перечень дополняют ранее вошедшие в репертуар и возобновленные Ханджяном "Дон Жуан", "Смерть и просветление" Р.Штрауса; "Послеполуденный отдых фавна" и "Море" Дебюсси; "Испанская рапсодия", "Дафнис и Хлоя", "Вальс" Равеля, Пятая и Десятая симфонии Шостаковича, произведения Малера, Шенберга, Веберна, Лютославского, Пендерецкого и, конечно, сочинения русской классики: Чайковского, Скрябина, Рахманинова, Глазунова, Лядова" (2. էջ 83).

Հիրավի ծրագրային հեղափոխություն կատարեց Դ. Խանջյանը՝ նորանոր ստեղծագործություններ ներկայացնելով հայ ունկնդրին:

Դավիթ Խանջյանը հանդիսացավ այն անհատականությունը, որն ի գորտու եղավ ոչ միայն կարգ ու կանոն ստեղծել նվագախմբում, այլև դրա հետ մեկտեղ որակական կտրուկ փոփոխության ենթարկել աշխատակարգը ու առաջընթացի հիմքը դնել, ստեղծել այնպիսի նախապայման, որը ոչ թե ժամանակավոր, այլ մշտական վերելք էր ապահովում: Խանջյանի փայլուն մեկնություններից էին Դմիտրի Շոստակովիչի սիմֆոնիաները (8,10), մոտ ու հարազատ էին Բ. Ստրավինսկու, Ռ. Շոքրատուի մտածողության անսովորությունն ու առաջադիմությունը, Բարտոկի ռիթմի լարված շարժումն ու իմպրեսիոնիստների հայտնագործությունները:

Չատարվող բոլոր ստեղծագործություններում նա ձգտում էր ի հայտ բերել համամարդկային ձգտումներն ու գաղափարները, որոնք դիրիժորն անկատ հաղորդում էր և՛ երաժիշտներին, և լսողներին:

Ա. Բուրաշյանը 1985-ին գրել է. "Успехи Ханджяна-дирижера (как и оркестра) - следствие эффективности репетиционной работы. Атмосфера репетиций максимально приближена к концертной ситуации. Дирижер сдержан, его замечания точны... Своим несомненным педагогическим дарованием, последовательностью, определенностью методических принципов Ханджян часто заставляет вспомнить своего учителя М. Малунциана, оставившего столь светлый след в истории армянской симфонической музыки" (2. էջ 83).

Ինչպես վերը նշվեց, 1974 թ. հունվարին, Դավիթ Խանջյանը դարձավ Հայաստանի պետական սիմֆոնիկ

նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը:

Կարճ ժամանակահատվածում նվագախումբը՝ գեղարվեստական նոր ղեկավարի գլխավորությամբ վերակազմավորվեց՝ ձեռք բերելով աշխատանքային հստակ կարգ ու կանոն: Շատ շուտով ինչպես անձնակազմը Դավիթ Խանջյանին, այնպես էլ նվագախմբին հյուրախաղերի հրավիրեցին Մերձբայթյան, Անդրկովկասյան հանրապետություններ, Լենինգրադ, Կիև, բազմիցս Սոսկվա: Ամենուր հիացական գրախոսականներ ու գնահատանքի ջերմ արտահայտություններ՝ նշելով դիրիժորի և նվագախմբի համաձուլվածությունն ու բարձր պրոֆեսիոնալիզմը:

Ստեղծագործական սերտ փոխհարաբերություն էր ստեղծվել Դ. Խանջյանի և Ա. Տերտերյանի միջև: Ավետ Տերտերյանը ներկա էր գտնվում իր երկրորդ Միսֆոնիայի յուրաքանչյուր փորձին, և ամեն փորձից հետո նամակ էր գրում Դավիթ Խանջյանին՝ իր նկատառումներով: Դիրիժորը չափազանց զգայուն էր հեղինակի բոլոր ցանկությունների հանդեպ, ինչը անշուշտ միայն ծառայում էր գործի առաջընթացին: Խանջյանի մեկնությունը հնչել էն Տերտերյանի առաջին չորս սիմֆոնիաները, կատարումներ, որոնց հատուկ էր պարտիտուրի քաջ իմացությունը, հնչողության միասնությունը: Դավիթ Խանջյանի ստեղծագործական-կատարողական արվեստում հատուկ տեղ է հատկացվել Ա. Տերտերյանի ստեղծագործությանը և երախտապարտ կոմպոզիտորն իր երկերի ճշմարիտ մեկնարանման համար դիրիժորին է նվիրել իր 4-րդ Միսֆոնիան: «... Я всегда считал, что Четвертая симфония это “моя симфония”, моя правда. Симфония близка мне еще и потому, что ее звуковая атмосфера как бы оставляет слушателя наедине с самим собой, и здесь начинается познание собственного “я” через звук и тишину, музыку космоса и земли. После работы над этим произведением года два я вообще не мог писать никакой музыки, видимо оно у меня забрало творческой энергии больше, чем какие-либо другие сочинения. Я почувствовал истощение духовных сил и очень долго находился под воздействием этой симфонии. [...] Неслучайно Давид Ханджян решил тушить свет в зале во время исполнения Симфонии. Это создавало нужную атмосферу. Дирижер как бы не хотел, чтобы люди смотрели друг на друга, и давал возможность обернуть взгляд вглубь самого себя. И для того, чтобы это не показалось несколько претенциозным, он весь концерт вел в полумраке, освещалась только сцена. Я думаю, что в этом что-то есть» (2. էջ 159-160).

Անդրադաշնակով իր և Դ. Խանջյանի ստեղծագործական փոխհարաբերություններին, Ա. Տերտերյանն իր անտիպ հուշերում գրում է. «Моя дирижерская карьера длилась минуты 3-5. Примерно раза 3-4 я ткнул исполнителям вступление, и моя судьба была решена не в мою пользу. За пульс встал Давид Ханджян. И фактически не зная еще партитуры, провел первую репетицию. И так четыре симфонии. [...] Десять лет тесного сотрудничества. Он врос в мою музыку, я уже сочиняя музыку, видел его жест. [...] Жест мыслителя. Скупость, строгость. Ничего лишнего. Никакого лишнего, неоправданного движения рук. Спина Ханджяна за пультом была частью музыки. Удивительно выразительна. В ней ощущалась порога дирижера. Правильная осанка, стройность, изящество.

Огромная, взрывчатая сила. Большая мужская сила была в нем. И погружение. Пожалуй, самое редкое качество дирижера. Погружение в звук, его философское осмысление, как мне кажется, основное качество дирижера, необходимое для исполнения моей музыки было также ему присуще. [...] А Давид Ханджян был рожден дирижером и одарен той чудодейственной силой, которую никак приобрести нельзя, она или есть, или ее нет. Как это происходит-остается тайной вселенной, одним из нераспознанных явлений. [...] Дирижер-руководитель государственного коллектива, имеющий четкие функции пропаганды лучших образцов мировой музыки, какой же прозорливостью, предвидением, каким предчувствием, чутьем и какой, в конце концов, смелостью он должен был обладать, чтобы с уверенностью противопоставить свои убеждения в исполнении миссии, весьма разнообразной музыкальной общности, с ее сложнейшими противоречиями во мнениях и, что самое важное, переубедить основную ее часть (про-рессивную) и повести за собой. Это было чутье большого художника, ценителя, способного оценить раньше других, огромная духовная сила. [...] "Дирижер-философ, мыслитель, способный к долгим и осмысленным погружениям, где надо - спокойный, где надо - неистовый и дерзкий, но всегда красивый, на редкость артистичный, отвечающий самым высоким эстетическим нормам. При этом ничего лишнего, показного. Игры не было ни на сцене, ни в жизни. Он был чист и на-урален. Он был чист перед людьми, таким ушел и таким мы будем его помнить" (3. էջ 1-3, 5, 15).

Պրոֆեսոր Գ. Գյոռալյանը գրում է. «С большим успехом прошла Третья симфония А.Тертеряна. Как бы ни относиться к симфониям этого автора (а относиться можно, вероятно, по-разному — очень уж они непривычны, даже дерзостно непривычны), нельзя не признать, что они открыли совершенно новые пути в развитии национального симфонизма, значительно обогатив круг его традиционных образов и выразительных средств. О ценности новаторских исканий Тертеряна, убедительности его художественных решений свидетельствует хотя бы то, что его музыка уже оказала и оказывает несомненное влияние на творчество армянских композиторов» (//Коммунист, 14.05.1976).

70-ական թվերին հայ կոմպոզիտորների ստեղծագործություններին, որոնց եռանդուն տարածողը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն էր, հատուկ էր բազմապլանությունը, որն առաջին հերթին ի հայտ եկավ Էդվարդ Միրզոյանի յարայինների և գոսերի Միսֆոնիայում, ապա շարունակվեց Ջ. Տեր-Թադևոսյանի 2-րդ Միսֆոնիայում, Ղ. Սարյանի ստեղծագործություններում՝ ջութակի և նվագախմբի Կոնցերտում, Միսֆոնիայում: Այս երկերում շարժիչ տարր է հանդիսանում քնարական մտածողությունը: Այս ամենը հիանալի է արտահայտել դիրիժոր Դ. Խանջյանը, թափանցելով այս ստեղծագործությունների պարտիտուրների հեղինակային փյոյսիտիպայական մտածողության և գաղափարախոսության ակունքները: Այս ամենի հետ մեկտեղ նա հեշտությամբ իր հավատամքը ներարկում էր նվագախմբի երաժիշտներին՝ բացատրելով նրանց երաժշտական ստեղծագործության ռիթմի, հնչերանգի, լադի տարրերի նշանակությունն ու հասնում

պահանջվելիք հաջողության ու նպատակին: Այս դեպքում ունկնդիր երաժշտասերն ստանում էր այն, ինչ նպատակադրել էր կոմպոզիտորը, տվյալ դեպքում՝ Ղազարոս Մարյանը, որի քնարահոգեբանական փիլիսոփայությունն արտահայտվել է ջութակի և նվագախմբի Կոնցերտում և Միմֆոնիայում: Բսկ հայ երկու անվանիների ստեղծագործական ջերմ բարեկամությունն սկսվել էր դեռևս «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյի ստեղծման ժամանակ: Ղազարոս Մարյանի անտիպ հոդվածներից մեկում կարդում ենք. «... Он достиг уровня самобытного художника, получив широкое признание в нашей стране. Об этом свидетельствуют его постоянные приглашения на гастроли как индивидуально, так и с коллективом своего оркестра. Д.Ханджян стоял в преддверии международного признания, поэтому потеря его как музыканта и деятеля воспринимается всеми нами явлением глубоко трагичным. Важно, чтобы дело, начатое им, продолжало жить. Личность Ханджяна была необычайно динамичной, взрывчатой изнутри. От концерта к концерту раскрывались новые грани его дарования, шлифовалось мастерство. Одновременно с тем можно говорить о социальной мудрости Ханджяна, дирижера-гражданина, горячо заинтересованного в развитии музыкальной культуры Армении. Трудно и последовательно он вел гигантскую работу по привлечению широких слушательских слоев в концертный зал, но эта работа, конечно, была параллельно к его основной деятельности дирижера-исполнителя» (4. 158, 10-11).

Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը Դավիթ Խանջյանի կյանքն էր, առօրյան, միտքն ու հոգին: Անգնահատելի է նրա ներդրումը թե՛ հայ նվագախմբային կատարողական արվեստի զարգացման և թե՛ սերունդների դաստիարակման գործընթացում:

Պրոֆեսոր Ս. Մարգարյանը գրում է. «Хотя творческий путь Д.Ханджяна ока-ался трагично кратким, имя его вписано в ряд лучших дирижеров-интерпретаторов, значительно обогативших армянское исполнительское искусство. Показательно, что собственные художественные принципы Ханджян выявил достаточно рано, впоследствии лишь развивая и углубляя их, но не меняя в самой сути. Будучи воспитан на добротных, долго господствовавших в Армении традициях романтического исполнительского стиля с его тягой к красоте и полноте звучания, Ханджян тем не менее, по природе своего дарования был склонен к эмоциональной сдержанности. Может, вначале его оркестр и проигрывал в “красивости” звучания, зато дирижер компенсировал это желанием найти и обнажить в произведении стержень самой мысли. [...] Когда ох-атываешь мысленным взором, путь пройденный Давидом Ханджяном, невольно хочется произнести слово одержимость. Да, именно оно очень точно характеризует творчество му-ыканта, считавшего своим священным долгом раздвигать горизонты познания музыки и посвятившего этому всю свою сознательную жизнь» (5, 99, 102).

1974-1981 թթ., որոնց ընթացքում նվագախմբի հետ վերելք կատարեց Դավիթ Խանջյանը, դարձան դիրիժորի և նվագախմբի նվիրումի, մերձեցման, միջազգային մակարդակի հասնելու և բազմահազար երաժշտասեր ունկնդիրների սիրելի դառնալու ժամանակաշրջան:

Ստեղծագործական այնպիսի վերելքի, երբ նվագախումբն ու նրա դիրիժորը կատարողական վարպետության, նվագախմբի գործիքային բոլոր խմբերի միատեսակ ու հուժկու հնչողության, անսամբլային միաձուլման շնորհիվ դասվեցին Խորհրդային միության առաջատար նվագախմբերի շարքին:

1977 թ. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ընդհանուր հարցերի, խնդիրների, ինչպես նաև գործիքների, պարտիտուրների, աշխատավարձի անբավարարության մասին մանրամասն զեկույցով հանդես եկավ Դավիթ Խանջյանը՝ ՀՄՄՀ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի բյուրայի նիստում: Այս զեկույցման արդյունքում կենտրոնը հատուկ որոշում ընդունեց Հայաստանում սիմֆոնիկ երաժշտության հետագա զարգացման մասին:

Հարյուրավոր ընթերցված պարտիտուրներ՝ արևմտաեվրոպական դասականների, հայ, ռուս կոմպոզիտորների սիմֆոնիկ ստեղծագործությունների փայլուն կատարում, որոնք այժի էին ընկնում գեղարվեստական բովանդակության խորունկ ընկալմամբ, հնչերանգների թարմությամբ ու նվագախմբային տեխնիկական հնարների բազմազանությամբ:

Ընդարձակ ծրագիր էր ընդգրկում Դավիթ Խանջյանի 1974-1981թթ. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգային հայտագիրը: Անվանի դիրիժորի ղեկավարությամբ Հայաստանում առաջին անգամ հնչեցին Ռ. Շտրաուսի, Գ. Մալերի, Բ. Ստրավինսկու, Բ. Բարտոկի, Վ. Լյուտտալսկու, Ֆ. Պուլենկի ստեղծագործությունները, Պրոկոֆևի դաշնամուրի և նվագախմբի 5-րդ Կոնցերտը, Շոստակովիչի 8-րդ Միմֆոնիան, ինչպես նաև Կանչելլիի 5-րդ, Սկուլտեի 5-րդ, Սյոնիսկու 2-րդ Միմֆոնիաները և շատ այլ ստեղծագործություններ: Անմոռանալի են նրա ընթերցմամբ Մոցարտի, Բեթհովենի, Բրամսի երկերի պարտիտուրների կատարումները, Վագների օպերաներից սիմֆոնիկ հատվածները, ինչպես նաև Չայկովսկու, Ռախմանինովի, Շոստակովիչի ստեղծագործությունները:

Հայն ընդգրկում ունեին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգային հայտագրում հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները՝ Ալեքսանդր Սպենդիարյանից, Արամ Խաչատրյանից մինչև իր ժամանակակից-սերնդակից Տիգրան Մանսուրյան ու Լևոն Չաուշյան: Յուրաքանչյուր համերգի հայ կոմպոզիտորների գործերի կատարումը Դավիթ Խանջյանի համար պարտադիր նախապայման էր դարձել:

Դավիթ Խանջյանի երաժշտական բարձրագույն հեղինակությունն ու մարդկային հատկանիշները դեպի իրեն Երևան էին ձգում ժամանակի խոշորագույն վարպետ կատարողներին՝ Նատալյա Գուտման, Յուրի Բաշմետ, Օլեգ Կազան: Բսկ հայ տաղանդներ Սվետլանա Նավասարդյանի և Ռուբեն Ախարոնյանի հետ ստեղծագործական համագործակցությանն ու արդյունքին քաջաստեղյակ են հայ երաժշտասերները, դրանք երևույթ էին հայ կատարողական արվեստում:

Դավիթ Խանջյանը, ինչպես և իր ղեկավարած նվագախումբը ցանկացած ստեղծագործության կատարման ժամանակ դառնում էին իրենց կերտած երաժշտության անբաժանելի մասն ու, կարծես թե, համահեղինակը, կյանք ու շունչ տվողը: Իրականում էլ այդպես է, կատարողն է, որ կյանքի է կոչում

Հենց Շոստակովիչի 10-րդն էր, որ ժամանակին դիրիժորի դիպլոմային աշխատանքն էր այս նվագախմբի հետ: Ի դեպ, գուրգուրանքն էր այն հանգամանքը, որ Ղ. Սարյանը Շոստակովիչի սանն էր, իսկ Ռ. Այրթունյանը՝ Սարյանի: Երեք սերունդների ստեղծագործական հանդիպում այսպես կարելի էր անվանել այս համերգը:

Անհրաժեշտ էր որոշել ու գտնել թե ո՞վ պետք է լինի այն գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը, որն արժանի լինի գրավելու անվանի դիրիժորի տեղը՝ իր մարդկային հատկանիշներով, երաժշտական ու մանկավարժական գիտելիքներով, նվագախմբի իմացությամբ և դիրիժորական տաղանդով Դավիթ Խանջյանին չզիջող անհատականությամբ:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարի և գլխավոր դիրիժորի վաճառական կանգնեց Վալերի Գերգինը* դիրիժորական իր արվեստով կարծես թե գալով լրացնելու Դավիթ Խանջյանի անավարտ թողած ծրագրերը:

Դա սեպտեմբերին էր, իսկ Վալերի Գերգինի առաջին բեմերը Երևանում կայացել էր նույն 1981-ի մայիսի 19-ին**:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ էր ունենալու «Հերբերտ ֆոն Կարայանի հիմնադրամ» միջազգային մրցույթի դափնեկիր Վալերի Գերգինը***: Նա առաջին անգամ էր Երևանում հյուրախաղերով, իսկ համերգի մենակատարն էր երիտասարդ դաշնակահար Վահագն Պապյանը****, որը պետք է կատարեր Սերգեյ Պրոկոֆևի դաշնամուրի և նվագախմբի 3-րդ Կոնցերտը:

Վալերի Գերգինի, որպես Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, պաշտոնական առաջին համերգը կայացավ 1981 թ. սեպտեմբերի 27-ին, Հայֆիլիհարմոնիայի փոքր դահլիճում*****:

Անդրանիկ այդ համերգին հնչեցին Դավիթ Խանջյանին նվիրված Ղազարոս Սարյանի 1-ին և Ալվես Տերտերյանի 5-րդ Սիմֆոնիաները: Սա նշանակում էր, որ նվագախմբի նոր ղեկավարը շարունակում է իր նախորդի ստեղծագործական սկզբունքները:

1981-1982 թթ. համերգաշրջանի բացման համերգից հետո Վալերի Գերգինի ղեկավարությամբ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը նախապատրաստվեց և մասնակցեց Թբիլիսիում հոկտեմբերի 23-ին կայացած Սիմֆոնիկ երաժշտության Համամիութենական փառատոնին:

Նվագախմբի առջև ստեղծագործական անհրաժեշտ խնդիրներ առաջադրելով և հասնելով դրանց լուծման մեջ որոշակի արդյունքի, դիրիժորն աճում էր ինքը նա: Եվ էթե այսօր նա դասվում է աշխարհի առաջնակարգ դիրիժորների շարքին, դրանում առկա է նաև Հայաստանում նրա 4 տարիների աշխատանքը:

Պրոֆեսոր Ս. Սարգսյանը գրում է. "Надо отдать справедливость молодому исполнителю: он со всей серьезностью отнесся к работе с коллективом. Продолжив работу по совершенствованию исполнительского мастерства оркестра, достигшего при Д. Ханджяне больших творческих успехов, дирижер акцентировал такие стороны этого процесса, как артикуляционная выразительность духовых инструментов, культура интонирования струнных групп, а главное - воспитание артистичности, импровизационно-игровой манеры всех артистов. Ставя перед оркестром серьезные задачи, неукословно добиваясь их решения, дирижер рос вместе с ним и сам" (6. էջ 74-75):

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ և Երևանում, և՛ այլ քաղաքներում (հյուրախաղեր)* Վալերի Գերգինը ղեկավարել է 67 համերգ՝ հնչեցնելով արևմտաեվրոպական և ռուս դասականների երկերից: Մեծ արժեք ու նշանակություն ունեն Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ նրա ղեկավարությամբ առաջին անգամ հնչած հայ կոմպոզիտորների շուրջ 30 պարտիտուրները, որոնցից անպայման պետք է նշել Ս. Բարաթրոսյանի «Կանտատը», Ռ. Սարգսյանի «Օրատորիան», Լ. Աստվածատրյանի շեփորի և նվագախմբի «Մերզունիա»-ն (մենակատար՝ Յ. Բալյան), Ա. Աճեմյանի 6-րդ, Վ. Բարաթրյանի 5-րդ, Ջ. Տեր-Թադևոսյանի 4-րդ, Մ. Իսրայելյանի Սիմֆոնիաները:

Նրբազգաց արվեստագետին հաջողվեց ի հայտ բերել այս ստեղծագործությունների բովանդակության մեջ առատորեն արտահայտված ազգային գծերը: "Если заглянуть в репертуарный список исполненных В. Гер -

* Վալերի Գերգինը (1953) 1978 թվականին ավարտել է Լենինգրադի Ռիմսկի-Կորսակովի անվան կոնսերվատորիայի դիրիժորության բաժինը (ղեկավար՝ Ի. Մուսին):

** Այդ համերգին Երևանում առաջին անգամ հնչեց Սերգեյ Պրոկոֆևի 2-րդ Սիմֆոնիան: Իսկ համերգի ծրագիրն ամբողջությամբ XX դարի դասական Ս. Պրոկոֆևին էր նվիրված: Նըշված երկերի հետ հնչեց նաև հեղինակի «Ռուսոն և Ջուլիետ» բալետի երաժշտության 2-րդ Սյուիտը:

*** 1976 թ. Գերգինին շնորհվեց Դիրիժորների համամիութենական մրցույթի Երկրորդ մրցանակը (առաջին մրցանակն այդ տարի շնորհվեց), իսկ 1977 թ. Գերգինը հաղթող ճանաչվեց Բեռլինում Հերբերտ ֆոն Կարայանի անվան դիրիժորների միջազգային մրցույթում և դեռևս կոնսերվատորիայի ուսանող (պրոֆ. Մուսինի դասարան), հրավիրվեց Մարիիլյան (այն ժամանակ Կիրովի անվան) օպերային թատրոն: 35 տարեկանում Վ. Գերգինը (1988 թ.) ընտրվեց Մարիիլյան թատրոնի գեղարվեստական ղեկավար, իսկ 1996-ից թատրոնի գեղարվեստական ղեկավարն ու տնօրենն է: Մարիիլյան թատրոնում նա դաստիարակել է միջազգային մակարդակի երգիչներ, սակայն նրա գեղարվեստական գլխավոր նվաճումը թատրոնի հայտագրի ընդարձակումն ու թարմացումն է: Հանրության լայն արձագանքի են արժանացել Ս. Պրոկոֆևի «Մեյնոն Կոսկո» (1999 թ.) և «Պատերազմ և խաղաղություն» (2000 թ.), Վագների «Պարսիֆալ» (1997 թ.), «Նիբելունգյան մատանին» քառապատման աշխատանքները (սկսել է 2000-ից): Այսօր մեծանուն դիրիժորն իր հայտագրում ունի շուրջ 25 օպերա: Վալերի Գերգինը Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» օպերայի հրավիրյալ գլխավոր դիրիժորն է: Վալերի Գերգինն աշխատել է աշխատում է համաշխարհային փառքի արժանացած նվագախմբերի հետ՝ Վինենալ ի ֆիլիարմոնիկ, Չիկագոլ ի ֆիլիարմոնիկ, Լոնդոնի սիմֆոնիկ, Բեռլինի ֆիլիարմոնիկ, «Քովերթ-Գարդեն», Լա-Սկալա օպերային թատրոնների նվագախմբերի հետ: Նա նաև մի-

гиевым с Госоркестром Армении произведений, просто трудно представить, возможно ли это? Столько названий, столько концертов за четыре года? Но все это действительно, было отрепетировано и исполнено в концертах не только в Ереване, но и в других городах нашей республики и в Москве” (7. էջ 39):

Գերգիևի ղեկավարությամբ նվագախումբում իր աշխատանքն է վերհիշում նվագախմբի վետերան, շեփրահար Յուրի Բայանը. “Гергиев - чуткий аккомпаниатор, с которым можно было свободно музицировать, заранее зная, что он всегда поддержит, поймет, найдет. Во время работы он был требователен к оркестрантам, не мирился с фальшью и неправильно сыгранной фразой, сам работал с полной отдачей, того же требовал от нас, а после работы он становился простым, от-ывчивым другом, с которым можно было поделиться всем, посидеть за чашечкой кофе, беседа на самые разные темы. С большим желанием и хорошим настроением приходили мы на репетицию и старались играть с ним все концерты, а концерты Гергиев проводил с большим энтузиазмом, артистизмом (что сразу передается оркестру) и большой уверенностью. Меня всегда волновала проблема ауфтакта у дирижера и опытному музыканту по этому простому, казалось бы, но очень важному штриху сразу становится ясно, что из себя представляет дирижер. У Гергиева эта проблема отсутствует, по его ауфтакту можно правильно и вовремя взять дыхание (что очень важно для духовиков), безошибочно ориентируясь в каком темпе пройдет произведение. [...] Концерты Гергиева были всегда своеобразным праздником симфонической музыки и для самого оркестра, и для многочисленной аудитории слушателей” (3. էջ 64-66):

Գերգիևն առանձնակի ուշադրություն էր դարձնում հայ կոմպոզիտորների ստեղծագործություններին և առանձնապես Ա. Խաչատրյանի երկերին, աշխատելով ներթափանցել նրա երաժշտության ազգային երաժշտության հորձանուտների մեջ: Ա. Սարգսյանը գրում է. “Гергиев воспринимает творчество нашего классика, быть может, более рационалистично, как бы анализируя, классифицируя содержащиеся в его партитурах красоты, проверяя их эстетическим требованиям сегодняшнего дня. [...] Конечно, в самой музыке Арама Хачатуряна заложена возможность различной интерпретации. Но задумываясь приходишь к выводу, что характер воссоздания этой музыки Гергиевым сформировался в результате общения дирижера с Арменией, ее народом, ее музыкой - прежде всего современной. Без этого ни музыка А. Хачатуряна, ни “Ереванские этюды” Спендиарова не обрели бы у Гергиева дыхания сегодняшнего дня. Немало сочинений армянских композиторов разных поколений прозвучало под управлением Гергиева в Ереване и в Москве” (5. էջ 77):

Գերգիևի կատարողական դիրիժորական ոճին հատուկ է ներշնչանքը բարձրագույն զգացողականությունը, զուգակցված ոսկերչական նրբությամբ մշակված ռիթմահնչերանգային տարրերով: Հորվածագիր



Վալերի Գերգիև
Valery Gergiev
Валерий Гергиев

Վ. Գիզորը գրում է. “Как дирижер Гергиев обладает высокой техникой, широким выразительным жестом, тонким ощущением ансамбля. Он умеет придать звучанию оркестра особую плотность, новые краски” (8. էջ 796-797):

Վ. Գերգիևին Հայաստանի կատարողական գերագույն մրցանակ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան շնորհելու առիթով* «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2000 թ. փետրվարի 12-ին արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Արաքսի Սարյանը դիրիժորի երևանյան գործունեության մասին գրում է. «Գործունեության չորս տարիներին Գերգիևը հնչեցրեց ոչ միայն եվրոպական ու ռուսական դասականների, XX դարի հեղինակների գործերը, այլև հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Նոր, հույժ անհատական մեկնաբանություններով Գերգիևն ընթերցեց Ա. Հարությունյանի, Ղ. Սարյանի, Ա. Տերտերյանի, Է. Միրզոյանի, Է. Հովհաննիսյանի և ուրիշների երկերը: Դիրիժորական բացառիկ խորաթափանցությամբ նա գիտեր զգալ երաժշտական յուրաքանչյուր նրբագիծ, յուրաքանչյուր մանրամասն, բայց երկը ներկայացնել դրամատուրգիական իր ամբողջությամբ: Ունկնդրին առանձնապես առիքնում էր նրա դիրիժորական արտիստիզմը՝ բնական, ոչ արտաքին էֆեկտների, երաժշտությամբ ծնված... նրա յուրաքանչյուր համերգը հիրավի տոն էր մեզ համար» (9. էջ 3):

«Գերգիևը, որպես դիրիժոր-աստղ, ինչպիսին, իրականում նա անկասկած հանդիսանում է, դասվում է հնչյունների հրաշագործների շարքին, որոնք ունակ են դեպի իրենց ձգելու հանդիսականին այնպես, որ նա ոտքերի տակ կորցնում է հենարանը», - գրել է “Boblinger Bote”-ը 2000 թ. հուլիսին: Վալերի Գերգիևի Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ աշխատանքի տարիները նվագախմբի վերելքի ու գեղարվեստական նվաճումների ժամանակաշրջան էին:

1985 թ. հունվարի 15-ին և 19-ին Վալերի Գերգիևի և Յուրի Ցիրյուկի ղեկավարությամբ Հայաստանի վաստակավոր կոլեկտիվ պետական սիմֆոնիկ նվագախումբը երկու համերգ նվիրեց Հայաստանում առաջին սիմֆոնիկ նվագախմբի հիմնադրման (1925 թ. մարտի 20, Արշակ Աղամյան) 60-ամյա հոբելյանին: Առաջին համերգի մենակատարներն

* Մոսկվա, Լենինգրադ, Կիսլովոդսկ, Էսենտուկի, Ժելեզնովոդսկ, Պյատիգորսկ, Լենինական:

* Հայաստանում աշխատող դիրիժորներից միակը՝ արժանացած հանրապետության գերագույն այս պարգևին:

Էին միջազգային մրցույթների դափնեկիրներ՝ դաշնակահար Անդրեյ Գավրիլովը և ջութակահար Լևոն Համբարձումյանը, երկուսն էլ Մոսկվայից: Երկրորդ համերգի մենակատարն էր Վլադիմիր Յելմանը, իսկ դիրիժորը Յուրի Ցիրյուկը:

Նշանավոր այդ տարեդարձին նվիրված երկու համերգը՝ Գերգիևի երևանյան աշխատանքային գործունեության վերջնագիծ հանդիսացան:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Тигранова И. Г., Лирика в творчестве А. Хачатуряна., (исследование), Ер., 1973.
2. Будагян А. Г., Давид Ханджян., //Советская музыка, N 8, 1976.
3. Тертерян А. Р., Личный архив., "Воспоминания Авета Тертеряна" (рукопись).
4. Сарьян Л. М., Личный архив., "Он был своего рода камертоном культуры", (Воспоминания о Д. Ханджяне), (рукопись).
5. Саркисян С.К., Одержимость., Вспоминая Давида Ханджяна., //Советская музыка, N 9, 1987.
6. Саркисян С.К., Утверждение (В. Гергиев), //Советская музыка, N 12, 1985.
7. Ионисян И. С., Дирижер Валерий Гергиев. Ордзхоникдзе, 1989.
8. Тригорьев В., Дирижеры., /Русская музыка и XX век., /Ред.- сост. М. Г. Арановский., М., 1997.
9. ՄարյաՆ Ա. Ա., Վալերի Գերգիևը Երևանում //Հայաստանի Հանրապետություն, 12.02.2000 թ.:

Tigranova I. G, Lyricism in the Works of A. Khachaturian (Research). Yer., 1973.

Budaghyan A. G, David Khanjian., //Soviet Music, No. 8, 1976.

Terteryan A. R., Personal Archive. "Memories of Avet Terteryan"

REFERENCES

(Manuscript).

Saryan L. M., Personal Archive. "He Was a Kind of Tuning Fork of Culture." (Memories of D. Khanjian) (Manuscript).

Sarkisyan S.K., Obsession, Remembering David Khanjian, //Sovetskaya muzyka, No. 9, 1987.

Sarkisyan S.K., Confirmation (V. Georgiev), //Sovetskaya muzyka, No. 12, 1985.

Ionisyan I.S., Conductor Valeriy Georgiev, Ordzhonikidze, 1989.

Grigoryev V., Conductors (Russian Music and the 20th Century), Edited and Compiled by M.G. Aranovskiy, Moscow, 1997.

Saryan A. A., Valeriy Georgiev in Yerevan, Republic of Armenia, 12.02.2000.

Հեղինակի մասին. ՆԱԼԵՎ ԿՎԵԼԵՏԻՆԻ ԹՈՎՄԱՅԱՆ, PMP ..., Թ. Հայկական բարեգործական ընդհանուր միության թիմին միացել է 2022 թ., որպես Կատապուլտ ստեղծարար ակադեմիայի ծրագրի շահերի պաշտպանության ղեկավար, հաստատելով փոխնախագահի համագործակցություն մասնավոր հատվածի և կառավարության հետ՝ Հայաստանի ստեղծարար արդյունաբերությունը զարգացնելու նպատակով: 18 տարի նա ղեկավար պաշտոններ է զբաղեցրել Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակում՝ ղեկ. բազմամիլիոն միջազգային ծրագրեր արվեստի, կրթության, կառավարման և հասարակության ոլորտներում: Արևելյան Եվրոպայի 15 երկրներում (ներառյալ Հարավային Կովկասը, Կենտրոնական Ասիան և Արևմտյան Բալկանները): Արվեստագիտության թեկնածու է 2002-ից. Ծրագրերի կառավարման ղեկավարված ամսանագետ (PMP...)՝ 2018-ից: Այժմ ուսանում է գործադիր բիզնես կառավարում Յորքի և Ստրասբուրգի համալսարանների մագիստրոսական ծրագրում: Որպես Մշակութային քաղաքականության և արվեստի կառավարման փորձագետ և հրավիրված դասախոս, նա համագործակցել է Ցինցինատի համալսարանի (Օհայո, ԱՄՆ), Գարլ Մարիա ֆոն Վերերի կոնսերվատորիայի (Դրեզդեն, Գերմանիա), Կովկասի ինստիտուտի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, ԵՊԿ-ի և Հայ-Ռուսական համալսարանի (Երևան, Հայաստան) հետ: Թ. IETM-ի, Մեծահասակների կրթության և ցլյանս ուսուցման ասոցիացիայի, Միջազգային ծրագրերի գնահատման ցանցի, Արևելաեվրոպական երաժշտական ընկերակցության, Երաժշտության տեսության ընկերության, Էթնոերաժշտագիտության էվրոպական ընկերության, CULTURELINK ցանցի, Հայաստանի կոմպոզիտորների միության, Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է: Հեղինակել է 100-ից ավելի հոդվածներ և հրատարակումներ պարբերականներում և ամսագրերում:

About the author: NAREK VALENTIN TOVMASYAN, PhD, PMP® N. joined Armenian General Benevolent Union in 2022 as Advocacy Manager for Katapult Creative Accelerator Program, where he forges partnerships with the private sector and government in order to develop Armenia's creative industries. For 18 years he held senior positions at the Armenian mission of the British Council, leading large-scale, multimillion, international projects in education, governance, arts and society sectors across 15 countries in wider Europe (including South Caucasus, Central Asia and Western Balkans). Holding a PhD in Art History (2002) and a Project Management Professional Diploma, PMP® (2018) and currently studying Executive MBA at University of York and University of Strasbourg he has an extensive and diverse background combining interdisciplinary creative productions with advocacy, research, consultancy, policy, M&E and program development for the Cultural and Creative Industries as well as the government. As a guest lecturer of Cultural Policy and Arts Administration Dr. Tovmasyan cooperated with the Cincinnati University (Ohio, USA), the Conservatory of Music Carl Maria von Weber (Dresden, Germany), the Caucasus Institute, Yerevan State Institute of Theatre and Cinema, Yerevan Komitas State Conservatory, and the Russian - Armenian University (Yerevan, Armenia). Dr Tovmasyan is a member of Union of Composers of Armenia, IETM, Adult Education and Lifelong Learning Association, International Program Evaluation Network, Union of Journalists of Armenia and has more than 100 articles and publications in periodicals and magazines.

Об авторе: НАРЕК ВАЛЕНТИНОВИЧ ТОВМАСЯН, PMP®, кандидат искусствоведения. Товмасын присоединился к Лрмянскому обв,еМу благотворительному союзу в 2022 году в качестве менеджера по адвокации программы творческого акселератора Katapult, где он занимается установлением партнерских связей с частным сектором и государственными структурами для поддержки и развития творческих индустрий Армении. Обладая 18-летним опытом руководства в армянском представительстве Британского Совета, Нарек возглавлял масштабные, многомиллионные международные проекты в областях образования, управления, искусства и общества в 15 странах Европы, а также на Южном Кавказе, Центральной Азии и на Балканах. Имея кандидатскую степень по истории искусств (2002), профессиональный диплом по управлению проектами PMP® (2018) и в настоящее время обучающийся Executive MBA в Университетах Йорка и Страсбурга, Нарек обладает широким междисциплинарным опытом, сочетающим творческую деятельность с адвокацией, исследованиями, консультированием, разработкой культурной политики, мониторингом и оценкой программ в сферах культуры, искусства и государственного управления. Как приглашенный лектор, Н. Товмасын сотрудничал с Университетом Цинциннати (Огайо, США), Музыкальной консерваторией Карла Марии фон Вебера (Дрезден, Германия), Институтом Кавказа, Ереванским государственным институтом театра и кино, Ереванской государственной консерваторией имени Комитаса и Российско-Армянским университетом. Н. Товмасын является членом Союза композиторов Армении, IETM, Ассоциации образования взрослых и непрерывного обучения, Международной сети оценки программ, Союза журналистов Армении, имеет более 100 статей и публикаций в периодических и профессиональных изданиях.